ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 293-Ա/2 05.03.2020թ.

ԼՈՆԴՈՆԻ «ՌՈՅԱԼ» ՕՊԵՐԱՅԻՆ ԹԱՏՐՈՆԻ ԼՍՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՅԿ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝ Լոնդոնի «Ռոյալ» օպերային թատրոնի լսումներին Հայկ Տիգրանյանի մասնակցությանն աջակցելու նպատակով

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել Լոնդոնի «Ռոյալ» օպերային թատրոնի լսումներին Հայկ Տիգրանյանի մասնակցության ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1168. Արվեստների ծրագրի» «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման համար Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված գումարներից (տող՝ «Միջազգային մշակութային համագործակցության իրականացում, սփյուռքի հետ համագործակցություն, հայ մշակույթի պահպանում») հատկացնել 220.2 հազար (երկու հարյուր քսան հազար երկու հարյուր) դրամ՝ 2020 թվականի մարտի 16-19-ը Լոնդոնում «Ռոյալ» օպերային թատրոնի լսումներին Հայկ Տիգրանյանի մասնակցությանն ծախսերի ապահովմանը:

3. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) գլխավոր քարտուղարին՝ սույն հրամանի 2-րդ կետում նշված գումարը հատկացնելու համար, հրամանի ուժի մեջ մտնելու պահից 15-օրյա ժամկետում հաստատել ծախսերի նախահաշիվը և կնքել պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր) «Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի հետ:

4. Նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետին՝

1) հսկողություն իրականացնել պայմանագրերի, պայմանագրերով սահմանված աշխատանքների կատարման և բովանդակային հաշվետվությունների ներկայացման ժամկետների կատարման նկատմամբ.

2) պայմանագրերով նախատեսված բովանդակային հաշվետվություններն ստանալուց հետո՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում, դրանց վերաբերյալ եզրակացությունները տրամադրել նախարարության ֆինանսաբյուջետային վարչությանը.

3) մինչև պայմանագրերի գործողության ժամկետների ավարտը նախարարության գլխավոր քարտուղարի հաստատմանը ներկայացնել պայմանագրերով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրությունների նախագծերը և բովանդակային հաշվետվությունները:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ն.Խաչատուրյանին:

X

ՆԱԽԱՐԱՐ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2020 թ_____N _____ հրամանի

ԾՐԱԳԻՐ

Լոնդոնի «Ռոյալ» օպերային թատրոնի լսումներին Հայկ Տիգրանյանի մասնակցության

1	Կազմակերպության անվանում	Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն
2	Կազմակերպության գտնվելու վայր	Հայաստան, 0002, Երևան Թումանյան փող., 54 շենք (Կենտրոն վարչ. շրջան)
3	Ծրագրի անվանում	**Լոնդոնի «Ռոյալ» օպերային թատրոնի լսումներին Հայկ Տիգրանյանի մասնակցություն**
3.1	Բովանդակություն	Լոնդոնի Ռոյալ Օպերային թատրոնի լսումների բաժնի ղեկավար Փիթեր Կատոնան (Peter Katona) 2020 թվականի մարտի 18-ին Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի մենակատար Հայկ Տիգրանյանին հրավիրել է մասնակցելու Ռոյալ օպերային թատրոնի լսումներին՝ հիմնական ներկայացումներում ելույթ ունենալու հնարավորություն ձեռք բերելու համար: Նախորդ տարվա նոյեմբեր ամսին մուտքի վիզայի ստացման ուշացման պատճառով Հայկ Տիգրանյանը չկարողացավ մասնակցել Ռոյալ օպերային թատրոնի երիտասարդական ծրագրի լսումներին, բայց որպես բացառություն՝ ստացավ նոր հնարավորություն՝ կրկին հրավիրվելու թատրոն: Հիշեցնենք, որ երիտասարդական ծրագրի հրավերն էլ ձեռք էր բերվել մի շարք մրցույթային փուլեր հաղթահարելուց հետո և Հայկ Տիգրանյանը ընտրվել էր 423 մասնակցից: Փիթեր Կատոնան, դիտարկելով Հայկ Տիգրանյանի մասնագիտական բարձր կարողությունները և գնահատելով միջազգային ամենահեղինակավոր հարթակներում ելույթներով հանդես գալու մեծ պոտենցիալը, երիտասարդական ծրագրի ավարտից հետո, հայ երգչին տվեց այս բացառիկ իրավունքը՝ մեկնաբանելով, որ տեխնիկական պատճառով մասնագիտական մեծ կարողություններով երգիչը չպետք

		է կորցնի իրեն բաժին հասած հնարավորությունը Ռոյալ օպերային թատրոնում բեմելու համար: Լսումներին ներկա են լինելու Ռոյալ օպերային թատրոնի գեղարվեստական ղեկավարներն ու երաժշտական պատասխանատուները Peter Katona(Director of Casting,), Mark Packwood (senior music staff) Oliver Mears (Director of Opera)և Antonio Pappano (Music Director, The Royal Opera):
3.2	Նպատակ	Այս ելույթների նպատակն է հանրակոչակել հայ օպերային կատարողական արվեստը միջազգային ամենահեղինակավոր հարթակում և միջազգային համագործակցության նոր հնարավորությունների ստեղծումը: Ռոյալ օպերային թատրոնի լսումներին Հայկ Տիգրանյանի մասնակցության նպատակն է նաև թատրոնի հիմնական մեներգիչների շարքում հայ մեներգիչ ունենալը, որը թե կհանրահռչակի Հայաստանը և թե վոկալ կատարողական արվեստը:
3.3	Անցկացման ժամկետ	Մարտի 18, 2020 թվական
3.4	Անցկացման վայր	Միացյալ Թագավորության Լոնդոնի Ռոյալ օպերային թատրոն
3.5	Ակնկալվող արդյունքներ	Լսումների արդյունքում Հայկ Տիգրանյանը հնարավորություն կստանա գլխավոր դերերգերով հանդես գալու Ռոյալ օպերային թատրոնի օպերային ներկայացումներում 2021-2022 թվականի թատերաշրջանում: Այս ուղևորությունը մեծ հնարավորություն ունի երգչի մասնագիտական կարիերայում լուրջ առաջընթաց գրանցել՝ ամրապնդելով միջազգային համագործակցությունը և միջազգային հեղինակավոր հարթակում ներկայացնելով Հայաստանի վոկալ կատարողական արվեստը: Ռոյալ օպերային թատրոնի պրոֆեսիոնալ անձնակազմի (դիրիժորներ, ռեժիսորներ, օպերային քոուչեր) հետ աշխատանքը հնարավորություն կտա երգչին ձեռք բերելու նոր հմտություններ, որոնք ապագայում կնպաստեն հայ երիտասարդների մասնագիտական զարգացմանը սույն ասպարեզում: